

ՏԻՐ ԵՒ ՏՆՕՐԻՆ

Ե. ՔՈՐՅՈՍԵԱՆ

Կամակ կամ որ եւ է

Պարտիկոն պէտք է ուղղել սա

Տնտիկն ԱՐՇԱՆՈՅՍ շաբաթի


ԳԱԼԻԷ (Եգիպտոս)

E. TOROSSIAN

Dirge. propr. du journal arménien

ARCHALOUICE

LE CAIRE (EGYPTE)



Լ Ր Ա Փ Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Երկրորդ շաբաթ	60
Տարեկան ուրբ դասեր	35
ՍՏԱՐ ԵՐԿՐՈՐԴ	
Տարեկան Գրքեր	20
Վեցամսեայ	12

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՆԿԻԿ ԵՒ ԲՈՂՈՍԱՊԵՐԻ ԿԱՆՔԸ ԽՆԻՍՏՈՍԻ ԵՒ ՆԱՍՏՈՍՆԻ

Խմբագրութեան ուղղութեամբ գրութիւնք եւ չէն տուիր

ԱԶԳԱՐԱՐՈՒԹԻՒՆԻ Կանխիկ վճարելիք եւ

ԱՐՇԱՆՈՅՍի Պատժոնի արժանաւոր աշխատակիցը, Մեծ Տիար Կ. Յ. Գարակիւլեան Տեղւոյն Թրանսպիրթ Անդրեանքէն թերթին մէջ Կ. Պոլսոյ Ամերիկեան նախորդ գեստիան Զօրավար Լիւս Վէլլէսի Սուլթանը գովարանող մէկ գրութիւնը կարգաւոր, միեւնոյն թերթին միջոցաւ հետեւեալ ուշադրութեամբ պատասխանը ուղղած է գեստիանին, զոր կը թարգմանենք, իր ամենակարեւոր եւ շահեկան պարունակութեանցը համար ԽՄԲ.

ՍՈՒԼԹԱՆԻՆ ԳՈՎԱԲԱՆՈՂԸ

Քանի մը օր առաջ, կ'ըսէ նշանաւոր յօդուածագիրը, մեր Պատժոնի շատ մը թերթերու մէջ կարգացի Պոլսոյ Ամերիկեան նախորդ գեստիան Զօրավար Լիւս Վէլլէսի տեսութիւնները Սուլթանին եւ իր ժողովրդին նկատմամբ:

Յայտնի ճշմարտութիւն մ'է թէ Սուլթանը խիստ քաղաքավար է հանդէպ այն սկսնակներու օտարականաց, որք Վասթրի բարանելի ակերը կ'այցելեն:

Ամենն ալ անխորտակելի կերպով Սուլթանին կ'ընդունին իր ուշադրութեան նըշանները. որք ճամբորդներու բնութեանը համեմատ, իրենց վրան քիչ կամ շատ տեսող տպաւորութիւն մը կը գործեն: Երբոր այս այցելուին գեստիան մ'է, Միւսիւլմաններուն Խաչիֆան իր ձեռքէն եկածը կ'ընէ զայն գրաւելու համար:

Եւ սակայն արուեստին մէջ հինցած շատ մը գեստիաններ չ'են խարուիր, մինչդեռ ուրիշներ, մանաւանդ երբոր վիպական տրամադրութիւններ ունին, երեւոյթներէն կը խարուին: Ես կը կարծեմ թէ մեր յարգելի վիպագիր, Զօրավար Վէլլէսի ալ, այս վերջիններու կարգէն է:

Շատ մը ուրիշ բաներէն զատ նա կ'ըսէ թէ « ինք ըստ գիտէ որ Սուլթանը պարկեշտ մարդ մ'է եւ երբեք իր խօսուելը դժուար չէ, չենք կարծեր թէ կ'ըսէ, Սուլթանը դասապարտելի ըլլայ, գործուած բոլոր վաշտագործները հաւար:

Քիչ մը անդին կ'ըսէ թէ « Այսինչ Հաւիտ իսիս ուստայ, զարգացած եւ դիւանագիտ մարդ մ'է, եւ երբ այսպէս չ'ըլլար, Օսմանեան պետութիւնը շատնց կործանած կ'ըլլար: Սուլթանը Բարիկ կրքուած է եւ քեւել Խաչիւլ մ'է, քայց Բրիտանեակալ զաղտիւրներ եւ զգացումներ ունի: Կարծեմ թէ կ'ըսէ, միայն աւիկայ բարակներ իր շնորհատրտիւն սկզբնաւորութիւն մը Սուլթանին հասցէին »:

Ասոր բացարձակապէս յայտնաբերմը մը ըլլալուն մարդ չի տարակուսիր հարկաւ, ու կուզեմ իմ կարծիքս յայտնել Սուլթանի եւ իր Հայրենակիցներու մասին:

Իմ ՅՑ տարուան Տաճկաստանցիի փորձառութիւնս, ինծի իրաւունք կ'ուտայ այդ մասին աւելի հմտութիւն ունենալու:

Պէտք է նախ եւ առաջ բերմ թէ Տաճկական կրօնքը, որի, առեւտրութեան եւ անարգանքի կրօնք մ'է եւ Սուլթանը իր կեանքը անզգայութեամբ եւ հեշտասէր հանդարտութեամբ կ'անցնէ. այդ կրօնքը, եթէ կ'ըսենք կրօնայ անուանուիլ-կարգելէ յառաջդիմութիւնը եւ կը վհատեցնէ կրթութիւնը: Կարծեցեալ հասարակայնն դըպրոցներու մէջ-թուով քիչ, եւ շատ թշուառական իրենց տեսակէն մէջ-դասագրքեր չ'կան Ղուրանը միակ գիրքն է, որուն մէջ թուրքեր կարգաւ կը սորվի կրօնը գրեթէ ու եւ կրթութիւն չ'են ստանար. ընտանեկան կեանք չ'կայ թուրքերոյ մէջ եւ վերջին ծայր տղէտ մայրերու մօտ բարոյական ազդեցութիւն չ'գտնուիր, երկիրը իր վերջին անկուսէն ազատելու համար:

Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ « Թրքական կառավարութիւն » ճանչցուածը կազմակերպեալ գողութեան սխրեմ մ'է, որն որ անապատ դարձուցած է աշխարհիս ամենագեղեցիկ երկիրներէն մին: Սուլթանը գողտրու պէտէն եւ իր բռնաւորութիւնը բացարձակ եւ անսահման է:

Այսպէս ըլլալով հանգերձ ինչո՞ւ համար է որ, այսպիսի կառավարութիւն մը-որ ժամանակիս նախատինքն է- կը թայլատուրի գոյութիւն ունենալ. պատասխանը շատ պարզ է:

Անդրեանցի գիւտնադէտները բարձր արժեք մը կցած են Եւրոպական պետութեանց մէջ, համաձայնութիւն կոչուած բանին, թէպէտեւ այսպէս կարգադրութիւն մը զուտ երեւակայական է. Անդրեան մինչեւ որ ատոր համադրեցաւ վերջերս, անմեղ հայեցող ահագին զոհարելութեամբ, այս երեւակայական իտեալովը շատ մը մեծածախս պատերազմներ ըրաւ:

Այս եւ ուրիշ պատճառներով ասոր ամենէն շատ շահագրգռող Անդրեան միշտ իբր աւանդական քաղաքականութիւն ունեցած է թուրքերոյ ամբողջութեան պաշտպան կանգնել: Այսպէս նա նեցուկը եղաւ ամենամանարդարանալի բռնակալութեան մը զոր ժամանակակից Եւրոպան ճանչցած ըլլայ:

Այս յիմար քաղաքականութեան հե-

տեւանքները եղան Գրիտանեայ աղետն Ովկէան մը. միայն վերջին հայկական ջարդերու զոհերը թիւը 200000 ը կ'անցնի, եւ նոյնքան ալ, այդ ջարդին բաղնաղան հետեւանքներէն մեծնողներուն թիւը:

(Շարունակելի)

ԱՐՇԱՆՈՅՍԻ ԵՒ ԱՌՈՂՋԱՊԱՂԱԿՈՅՑԻ

ԲՈՏՈՏԱՉԵԻՔ (Անքոիտ)

ԵՐԿՐՈՐԴ (Քեհիւս, Երբիտ)

Կարծես դարերու ընթացքին հետ ամէն ու բազմանալ դաշնագրած են այս շարադէտ որդիքը: Իրենց ծագման որոշ թուականը թէեւ անձանօթ մնացած է մինչեւ ցարդ, սակայն, եղած լուրջ ուսումնասիրութիւններուն ու մանրազոյցական բազմաշխատ քննութիւններուն շնորհիւ հաստատուած է այսօր որ, անոնց բովանդակ կենսագրութիւնը կը բովանդակի միւսն, եւ մասնաւորապէս խոզի ու արջաներու հոգ մտերուն եւ այդ մտերով պատրաստուած անձաշակ ու անմարտելի ապուխտներուն, — անբնական ու անմարդավայել պղծութիւններուն — խոհակերական պատմութեան մէջ, որոյ սկիզբը ստուգելի դժուար եւ վախճանը գծել անհնար է առ այժմ: Միայն այսքան կրնանք ըսել թէ այդ աղտեղի խոզիներու անխորտակ ու սանձարձակ գործածումը կ'ընտան երեւոյթներ առաջ բերաւ մարդուն կազմութեան մէջ, անորոշ հիւանդութիւններու եւ այլազան որդերու ծնունդ առաւ, որոց ամենէն ստակալին ու գրեթէ անբուժելին է ճարդը (քոլիլի), յորմէ յետոյ կուգան մեր ուսումնասիրութեան նիւթը կազմող երկրորդը, որք ընդհանրապէս երեք գլխաւոր դասակարգի կը բաժնուին:

Ա. Զինուած կամ մենակեաց երկրորդ (քեհիս առաւ ու վեռ աղիդեռ)

Բ. Անդէն երկրորդ (քեհիս ինեռ)

Գ. Փորագրուի երկրորդ (քեհիս պրոիտակալ)

Զինուած կամ մենակեաց երկրորդը որ իբրաւամբ, ըստ իւր կոչման, միեւնոյն անձանին մէջ մէկ հատ միայն կը գտնուի, ունի 0, 005 հազարորդամեղրէն մինչեւ 0, 01 հարիւրորդամեղր լայնութիւն, եւ 7-15 մեթր երկայնութիւն: Այս որդը որ կը տեսնուի գլխաւորաբար արեւելքի մէջ, ի Զուրքերիս, յ'Անդրիայ, ի Տրանսա, Զոլանտա, ի Գերմանիա եւ յ'Իտալիա, օժտուած է գունազարդ եւ բոլորէն չորս արիւնածուծ գործարաններով՝ որք գլխուն պատեմաձեւ խարիսխին վրայ շրջանակող կրկնապակ ճանկիկներէն յետոյ կուգան եւ իրեն զանազանող յատկանիշները կը կազմեն ու կը նըպաստեն ամբողջ կառչելու նուրբ աղիքներուն պատերուն ի գերեւ հանելու համար յաճախ տըրուած աղղու դարմանները: Իր գնդապետի գլխու մեծութեամբ գլուխը խիստ բարակ ու ճկուն վըզի մը վրայ հանգած է Եւ ճերմակորակ Եւ դը-

լուխէն շատ աւելի մեծղի մարմինը ժայաւէնի ձեւ ունի :

Մարմնոյն ողնայարածեւ ու մանկաւոր բեկորները մարմնէն անջատուելէ վերջ կարծա- կեաց են , եւ որոց եզերքներուն վրայ գտնուող փոփոխաչար ծակտիկները , համաչափ կանոնա- ւորութեամբ մը , որդին ծննդական գործարան- ները կը կազմեն եւ լի են հաւկիթներով : Այս ձուերը յաճախ առատութեամբ կ'արտաքսուին ապաւանին հետ , ընդ որս մերթ 0, 02 հարիւ- րորդամիթր երկայնութեամբ բեկորներ ալ կ'ել- ւան :

Այսօր կատարելապէս ապացուցուած է որ գինեալ երիզորդը առաջ կուգայ խոզին մտին մէջ գտնուող բոլորատուան ձձիէն : Աղտեղութեանց սիրահար խոզերը՝ որ ընդհանրապէս չ'են հեռա- ցներ իրենց կնձիթները աղբանոցներէն , կուլ կուտան այդ անհամար հաւկիթները , եւ որք բարեշնչման օրինաց համաձայն , անոնց մար- մնոյն մէջ զարգանալով կը փոխակերպին բոլոր- ատուան ձձիներու : Մարդն ալ , երբ ուտէ այս ձձիները պարունակող կենդանիին , մասնաւոր հում մտն իր մարտողական գործարանները այդ որդը պարփակող իրերապատ երկու փամփշտա- ձեւ թաղանթները կը հալեցնեն , եւ փոխելով , անոր նախկին վիճակը՝ նուրբ աղեաց մէջ , կը կազմակերպեն իսկապէս երիզորդը :

Անգէն երիզորդը կը տարբերի մենակեա- ցէն իր երկար ու աւելի թանձր մանկաւոր բե- կորներովը եւ մարմնոյն տասնէն մինչեւ քսան մէթր երկայնութեամբը . գլուխը զուրկ է ճան- կիկներէ եւ ծննդական ծակտիկէն գործարաննե- րը անկանոնաբար շարաշարուած են : Բոլորա- տուան ձձիներու ձեւով կը գտնուի արջուհիու- մէջ , եւ այս կենդանիներուն մտին անասման սպառումովը տարածուած է այսօր գրեթէ աշ- խարհի ամեն կողմը , եւ մասնաւորապէս ի Պե- ճիգայ , Գերմանիա եւ Ֆրանսա :

Շարունակելի Կ . Գ . ՈՒԶՈՒՆԵԱՆ

ՆԱՄԱԿ ԱՂԻՔՍԱՆՎՈՒՄԱՆ

Պատուարժան իմբագրութիւն « Արշալոյս » Լրագրի ի ' անիբէ

Տէր իմբագրապետ ,

Պատուական լրագրի անցեալ շաբաթ օրուան թիւին մէջ ՊԱՐՈՅՐ ստորագր- րութեամբ յայտարարութիւն մը կարգացի որով նամակագիր պարոնը թուականէս գրեթէ մէկու- կէս տարի առաջ « Նոր կեանք » ի մէջ յիշեալ կեղծանունով հրատարակած ՄԱՐՏԻԿ ԱՂԱ անուն վիպակին առթիւ կուգար խոնարհաբար ներո- ղութիւն խնդրել այն ամեն անձերէն որոնց զերբազանցութիւնը հիմայ կ'զգայ թէ վերա- ւորած է « գրական ճախարակ » մը :

Պ . Պարոյր ազատ է ուզածին չափ եւ իր ուզած ոճովը ներողութիւն խնդրել գործած յան- ցանքներուն համար , միայն կը մոռնայ որ այդ ներողագրին ներքեւ իր կեղծ անունին կցելու էր նաեւ իր բուն ստորագրութիւնը , զի ինչպէս ինքը շատ լաւ գիտէ , այդ կեղծանունը ժամա- նակին ուրիշ անձերու վերագրուեցաւ :

Արդ , ըստ որում ակնարկուած ուրիշ ան- ձերը ո՛չ Պ . Պարոյրի « գրական ճախան » ընե- լու եւ ո՛չ ալ յետոյ իր ներողագրի ստորագրե- լու պիտի գիշանէին , պարտք կը համարեմ իբ- րեւ « Նոր կեանք » ի վարչական մարմնին ան- գամներէն մին , ո եւ է շփոթութեան տեղի չի տալու համար յայտարարել թէ « ՄԱՐՏԻԿ ԱՂԱ » ի հեղինակ « Պարոյր » ը Աղէքսանդրիաբնակ Տիար Միքայէլ Կիւրճեանն է :

Խնդրելով որ հաճիք ներկայս իմ անձնա- կան պատասխանատուութեանս տակ հրատարա- կել Ձեր պատուական թերթին մէջ .

Մնամ յարգանք ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Աղէքս . 25 Սեպտ . 1900

« Նոր-Օր » թերթը՝ ըստ երեւութին՝ ինք ստանձնած ըլլալով Լսարան-Ը նիթերցատուն ըն- կերութեան նախորդ Գործ . Ժողովոյ արարքնե- րը լուսարանելու պաշտօնը , խմբագրութիւնս այլեւս անպատեհ կը տեսնէ այս խնդրով զբա- ղել , ցորչափ « Նոր-Օր » ի հրատարակութեանց մէջ ոչինչ տեսնէ ճշմարտութեան եւ ողջմտու- թեան հակառակ : Այն առթիւ թերեւս պատեհու- թիւն ունենանք հրատարակել նաեւ Տիար Ե . Քէրէստէճեանի ընդարձակ յօդուածը , զոր ար- գէն նշանակած էինք :

ԽՆԳԻՐ ՄԸ

« Նոր-Օր » լրագրի մէջ Լսարան Ը նիթերցա- տուն ընկերութեան սեպտ . 9 ի նիստ վերնա- գրութեամբ ատենագրութիւնը կարգացի , յո- րում մասնաւորաբար շնորհուած տեսայ իմ մա- սիս անուանարկութիւն . եթէ խնդիրը բոլոր ժո- ղովուրդն իր առջեւ բերեցին , մուկներ եւ մի- ղուկներ համարող « Նոր-Օր » ի խմբագրին յա- տուկ լինէր , բոլորովին կարեւորութեան զուրկ պիտի մնար , զի նորա (Տարաւն) առնուած է արգէն :

Եթէ ցաւալի կէտ մը կայ արգէն սա է որ Տիար . Ս . Փափաղեանի տունը գումարեալ ընդ- հանուր ժողովոյ պատուարժան անդամոց մէջ չէ գտնուած մի լուրջ հոգի որ գիտել տար թէ ներ- կայ ժողովը պարտք չ'ունի Տօք . Էվլիանի անց- եալ խնդրով զբաղել , այլ իր օրակարգն է տա- րեկան շրջանի գործունէութեան տեղեկագիրը եւ հաշուեկշիւը քննել , յորում միայն պիտի անուանուի Գործ . Ժողովոյ կարող վարչապետի տաղանդին քանակը :

Նւ անկէ աւելին , նոյն օրուան ժողովին մէջ կը տեսնուի որ 5 անձէ զատ ոչ ոք բառ մը խօ- սած է որոց երեքը արգէն անպարտաճանաչ եղած են եւ ես կը հաւատամ որ այն անձինք համբը- ներուն հետ շատ միամտաբար որս եղած լինին ծանօթ վարչապետ խմբագրի էնթրիքին , էնթ- րիք մը՝ որուն բարոյական եւ նիւթական մեծ պատասխանատուութեանէն շատ հեշտ կերպով կըր- ցաւ իւր օճիքը ազատել :

Թէ ԻՆՉՊԷՍ

Տ . Ս . Բիւրատ առանց իւր տեղեկագրի եւ հաշուեկշիւի վրայ ակնարկ մը նետել տալու , ուղ- ղակի կերպով շնորհակալութեան արժանացաւ . պաշտօնապէս հաստատել տալով թէ որչափ որ Նոր-Օր առանց ընդհանուր ժողովոյ որոշման հը- րատարակուած է , այսօր իր ժողովը զայն կը ճանչնայ , եւ որ աւելին է հաշուեկշիւի մասնա- խումբ մ'ալ կազմուեցաւ որ բնականաբար իր աննպատ տեղեկագրով Տ . Ս . Բիւրատը հեռա- ցնէ եւ « Նոր-Օր » ի գոյացուցած եւ գոյա- նալիք պարտուց շղթան ներկայից վիզն ան- ցնէ :

Սիրելի ժողովականքդուք Ս . Բիւրատը մեր- ժեցիք զայն շնորհաւորելէ ետքը՝ արդ հարցում մը . եթէ շնորհակալութեան արժանի էր ինչու մերժեցիք , եւ եթէ արտաքսուելու արժանի էր ինչու շնորհակալութիւն յայտնեցիք :

ՏՐ . Գ . ԷՎԼԵԱՆ Գահիրէ 28 Սեպտ . 1900

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լոնտրա 24 Սեպտ . — Անգղիացիք գը- րաւեցին Գոմաթի-Բորթը մեծաքանակ ար- ջաններով և Վիլքոնհէն և Պոթա զօրավար- ները 3000 Պօէրներով սահմանադրուին ան- ցան և գէնքերին յանձնեցին Բորթուկէզ- ներուն . թնդանօթները ջախջախեցին , վա- սընդի չ'էին կրնար տանել :

Ըստ « Տէլի թէլէկրաֆ » ի Ռուսիա մէկ միլիոն ռուբլի փոխատուութիւն ըրաւ Պարսկաստանի , որպէսզի այս վերջինը իր հարաւային ծովեզրը ամրացնէ :

Չինացիք կ'ըսեն թէ՛ Կայսրն ու Կայս- րուհին այլ ևս կայսերական պալատը չի պիտի մտնեն , վասնզի բարբարոսները (Ա- րեւմտեանք) պղծեցին զայն :

Աթէնք 24 Սեպտ . — « Շարքիէ » շո- գեհնաւին նաւազը բանտարկուեցաւ . փոթոր- կի միջոցին զեղծումներ ըրած ըլլալուն համար :

Շանհայ 27 Սեպտ . — Մովակալու- թիւնը ամերիկեան ածուխ կը գնէ Հիւսի- սային Ամերիկայի նաւատորմին համար :

Բարիզ 27 Սեպտ . — Ամերիկեան զօ- րագունդը Հոկտ . 1 ին պիտի սկսի Բէքը- նէն քաղաքը :

Անգղիացի զօրավար Սէթլ և 7000 զօրք ազատեցին Շուիցէրէնէքի պահակազօրքը , զոր Պօէրները պաշարած էին 15 օրէ ի վեր :

ԻՊԵԱՏԻՈՍ Կ . ՍԱՐԱՑԵԱՆ

Հ Ա Յ Դ Ե Ր Չ Ա Կ

ԱՐԱՆՑ ԵՒ ԿԱՆԱՆՑ

Շարա Պայ - էլ - Հասիս Թիւ 22

Կը յայտարարէ թէ՛ քանի տարիներէ ի վեր , հանրածանօթ Անգղիացի վաճառական - դերձակ ԺՕՆ ԲՕԼԱՔՕԹԻ նման կարեւոր տան մը մէջ աշխատելով՝ արհեստին ամեն նրբութիւններուն կատարելապէս հմուտ եւ փորձառու , այս ան- գամ հաստատուած է հանգուցեալ նուպար Փա- շայի Տայրաին գիմացը , նորաչէն խանութնե- րուն մէջ :

Թէ՛ իրեն գիմող երկու սեռէ Պատ . յա- ճախողք ըստ ամենայնի գո՛ պիտի մնան , արհեստի նրբութիւն տեսնելով , նորաձեւու- թեանց զանազանութիւններ գտնելով , եւ մա- նաւանդ՝ որ ամենէն կարեւորն է , չափաւոր վճարումներու փոխան , ձեւուոր եւ ճաշակաւոր զգեստներ ունենալով :

Տ Ե Ղ Ա Կ Ա Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

— Բարձր . Խտիվին ծննդեան տարե- դարձին առթիւ , երեքշաբթի օր , Աղէք- սանդրիոյ Ս . Պօղոս Պետրոս Եկեղեցւոյ քա- ըողիչ Արժ . Տ . Վահրամ Ծ . Վ . Ազարեան իր հետն ունենալով Ֆրնուզի Վանահայրը , Տ . Բարթուղիմէոս Վարդապետ Թախաճեան և Առաջնորդարանի՝ քարտուղարը Տ . Լեոն Մկրտչեան , շնորհաւորական այցելութեան գնացած է Բասէտտինի պալատը և իր հետե- ւորդներով միատեղ պատիւ ունեցած է ն . Բարձրութեան ներկայանալու :

Տ . Վահրամ Վարդապետ յանուն Աղէք- սանդրիոյ Հայ հասարակութեան շնորհաւո- րած է Բարձր . Խտիվին ծննդեան տարե- դարձը ու բարեմաղթութիւններ ըրած : Ն . Բ . Խտիվը բարեհաճած է իր գահունակու- թիւնը և շնորհակալութիւնը յայտնել :

— Բաղաքիս մէջ գտնուող Հայ գերասան- ները հինգ ստորագրութեամբ նամակ մը զրկած են Խմբագրութեանս , որուն հրա- տարակութիւնը կը խնդրեն : Թերթիս խմբ- բագրութիւնը՝ նախ քան այդ նամակը հը- րատարակելը , հարկ դատած է անգամ մը տեսակցել Հայ թատ . խմբին դերասանա- պետներուն Տիարց Թ . Փասուլեաճեանի և Ս . Պէնլեանի հետ :

Ուստի այս առթիւ Խմբագրութիւնս կը փութայ հրաւիրել յիշեալ երկու յարգոյ անձնաւորութիւնները , որպէսզի հաճին Ար- շալոյսի Խմբագրատունը հանդիպել յառա- յիկա երկուշաբթի 1 Հոկտ . 1900 յետ մի- ջօրէի ի ժամ 3 ին :

ԽՄԲ .

— Կը լսենք թէ Աղէքսանդրիոյ վաճա-

ուսանանքէն Պ. Ինիաս Գասթէլի նշանուած է թերթիս Խմբագրի Գահիրէաբնակ ազգականներէն ընդ Ալն. Օրիորդ Մարի Մուսալվարի. մեր անկեղծ շնորհակարարութիւններն ու ջերմագին մաղթանքները կը մատուցանենք երկու պատկառելի ընտանեացի :

— Լոնտոնէն կը հաղորդուի որ Պարսից Շահը թողուց Կ. Պօլիս երթալու նպատակը, վասնզի Սուլթանը չ'է ուզած զայն դիմաւորել կայարանին մէջ :

— Կ. Պօլսէն 19 սեպտ. թուականաւ կ'իմացնեն թէ Շահի գալուստին համար կարգուածէի խնդիրը կարգադրուած է : Պարսիկ Վեհապետը հաւանած է Սուլթանին այցելութիւն տալ առանց արարողութեան, իր գալուստը սեպտ. 29 ին հաստատուած է :

— Ըստ սեպտ. 17ի Պօլսէն հասած լուրերուն Իսկիւպի մէջ թուրք ոստիկանութեան և մահմէտական Ալպանիացիներու մէջ խռովութիւններ ծագած են, հետեւեալ օրը կարգը վերահաստատուած է :

ՀԵԼՎԱՆԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԻՒՆ

ՈՒՐԱԿ 28 ԱՊՏԵՄԲԵՐ 1900

Table with 6 columns of numbers: 7075, 1534, 7264, 9757, 6757, 1836; 6748, 2716, 1833, 4254, 1258, 5895; 9252, 8433, 4985, 3790, 2078, 362; 8386, 4824, 6245, 8814, 5027, 118; 1233, 6213, 2988

ՓԱՅԱՅԻՆ ԳԱՂՏՆԻՔԸ

Շահեկան է գիտնալ Արապ թերթերուն կարծիքն ու գաղաբարը Սուլթանի քեռայր Մահմուտ Բաշայի մասին :

Ըստ Մուալլասի, բաշան Եգիպտոս եկաւ հանգչելու և հնութեանց վրայ սքանչանալու համար :

Լէվա, հայրենասէր Մուսթաֆա Գամէլի թերթը, բարի գալուստ կը մաղթէ Մահմուտ բաշա Տամատին, և ինքզինքը բազմաթիւ կը համարի Եգիպտացիներուն և բոլոր թուրքերուն իմացնելու որ Սուլթանին քեռայրը և իր երկու որդիքը Կ. Պօլիս պիտի վերադառնան ընդհուպ : « Այս բանն ընելով, Սուլթանէն ետքը ամենէն բարի և ամենէն կորովամիտ մահմետական

իշխանին խրատները դործադրած պիտի ըլլան : Լէվա՝ այս խօսքերով՝ կ'ակնարկէ ն. Բ. Խոտիլին :

Մեր պաշտօնակիցը կը յաւելու որ՝ ըստ պաշտօնական յայտարարութեան Աղեքսանդրիոյ կառավարչութեան Մահմուտ բաշա և իր երկու որդիքը, երբ Աւստրիական Պօնտիս շոգենաւով հասան Աղեքսանդրիա, Գավալլայի Վազէմերու և Ն. Բ. Խոտիլին պաշտօնեաներուն Տնօրէն Ահմէտ Խայրի Բաշայի կողմէն ընդունուեցան :

Թաքլա բաշային օրաթերթն եղող էլ-Ահրաւ հետեւեալ կերպով կը համառօտէ բաշային դիրքը :

« Մահմուտ բաշա Երիտասարդ թուրքերուն դատը պաշտպանեց, Եւրոպա գնաց՝ սուրի պէս ճօճելով քարեկարգութիւն մեծ բառը : Բայց Եւրոպան նպատակաւ չ'գտնելով հոս եկաւ, կարծելով թէ՛ լաւագոյն միջավայր պիտի գտնէ և իր նպատակին պիտի հասնի : Մահմուտ բաշա՝ հազիւ հասած յուսախար եղած ըլլալու է :

Ըստ մեր կարծեաց, ժամանակը չ'անցած պէտք է համոզուի որ միակ միջոց, ազատելու իր պատիւն և իր ապագայն, Բատիշահին հետ հաշտուիլն է : »

Մօզաքթաւ ի խմբագրին հետեւեալը խօսեցաւ :

« Չմեռը Եգիպտոս պիտի անցնեմ, յետոյ Եւրոպա պիտի երթամ : Իմ մասին ըստեմին հակառակ, Կ. Պօլսէն մեկնեցայ, վասնզի կը տեսնէի որ իմ բարեկարգութեան համար ըրած խնդիրներս ապարդիւն կը մնային : Ամբաստանուեցայ իբրև Անգլիացուց բարեկամ. ճիշտ է. վասնզի ես համոզուած եմ որ Անգլիոյ և Թուրքիոյ շահը գրեթէ նոյն է, և պէտք է որ երկու կայսրութիւնք կատարեալ համաձայնութեամբ ապրին : Ես այն գաղաբարն ունիմ որ թուրքիոյ համար բարեկարգութիւն խնդրողներուն ձայնը լսելի պիտի ըլլայ վաղ կամ անագան : »

Հարկադրեալ եղրակացութիւնն այն է որ Մահմուտ բաշա Տամատ՝ Կ. Պօլսէն կը ծիլը դրած ատեն՝ մեծ դործ մ'ըրաւ կարծեց : Ոչ ինչ ազդեցութիւն ունեցաւ, և՛

պետները մեր ընկերներէն իւրաքանչիւրին ծանօթ են :

ԹԱԹՕԵԱՆ. — Շատ լաւ կը լինի. երկու մասի կը բաժնենք նախարարները և գեապանները պատրաստելու գործը . . .

ՄԱՐԻՄԵԱՆ. — Տեսակցիլ և միւսնոյն ատեն ամբաստանել շատ դիւրին է, բայց այդ ամենէն վերջ կարգը դատաւարութեան մասնելուն կ'ուզայ :

ԹԱԹՕԵԱՆ. — Ինչ վայ կայ դատի դիմելու, եթէ մենք ժամանակ չ'ունենք. փաստաբան մը կրնայ այդ գործը գլուխ հանել. մահաւանդ թէ այսօր 200 ոսկուոյ կ'ըրիկ գումարը ունինք մեր ափին մէջ : Դրամը ամեն ինչ դիւրութեամբ ի գլուխ կը հանէ :

ԱՏԵՆԱՊԵՏ. — Չէ՛ կարելի, գործը չ'երկարի և թերեւս այն կողմի համակիրները հետգնեալ շատնան և ուզին զմեզ տապալել, որովհետեւ մեր ըրածները, ինչպէս գիտէք. օրինական հիմքերու վրայ դրուած չ'են :

ՇԱԹՕԵԱՆ. — Դատաւարութիւն կարելի չ'է. ինչու որ նա ընդհանուր ժողովոյ անդամներն ընտրուած և վաւերացուած Ատենագիր է . . .

ԹԱԹՕԵԱՆ. — Եթէ ինծի մտիկ կ'ընէք, ո՛չ տետրակ ուզենք և ո՛չ ալ զինքն ընդունինք :

ԱՏԵՆԱՊԵՏ. — Ըսելէ զինք անդամակցութեան ալ մերժենք :

ԹԱԹՕԵԱՆ. — Հապա՛, հապա՛ : ՇԱԹՕԵԱՆ. — Աֆէրի՛մ, հիմակ հաւնեցայ

հիմա՛ դարձեալ (Սուլթանին) աչքը մոռնել կ'ուզէ :

Կիրակի օր ստացանք հետեւեալ շրջաբերականը, որ Սեպտ. 17 ին ժընէվի թըղթատան յանձնուած է :

ԲԱՅ ՆԱՄԱԿ ԱՌ ՀԱՅՍ

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՏԵՆԻՐ

Ապտիւլ Համիտ Սասունի նոր ջարդերով կ'սկսի իր գահակալութեան քսան եւ հինգ ամեակը, սակայն եւրոպական տէրութիւններ պաշտօնապէս մասնակցեցան Սուլթանին յրեւելանին : Սա՛ իր արիւնահեղութեան անյադ փափաքը սահմանափակած էր իր մահմետական հպատակները ջարդելով միայն, մինչև վեց տարի առաջ : Գահակալութենէն քիչ ժամանակ ետքը, գաղտնի հրամաններով խողխողել տուաւ, թէ՛ գաւառական բանտերու մէջ և թէ՛ Երլուրը՝ իր այցաց առջև, մեր աչքին լուսամիտ անձերը, որոնք նախատեսելով մեր հայրենեաց ապագայ ազէտները՝ կը յորդորէին ապագայ Վեհապետը անմիջապէս ձեռնարկել խոհուն և բարերար վարչութեան մը : Յետոյ Կ. Պօլսէն հեռացուց խեղամուտ երիտասարդ թուրքերուն մեծ մասը, որոնք այս արիւնասէր բնաւորութեան և անոր հետեւանքն եղող խժոժութեանց առջև չ'էին կրցած սքօղել իրենց պօզանքն ու զայրութիւնը : Այն ատեն ոչ ոք ուզեց իր ձայնը բարձրացնել իրաց այդ վիճակին դէմ :

Անուրանալի է որ երբ հիւանդութեան մը առաջին նշանը երեւալուն չ'զսպուիր, կը ծանրանայ և կը վարակուի : Ապտիւլ Համիտի ախորժակը բացուելով իր առաջին ոճիրներուն անպատիժ մնալէն, այքերը դարձուց դէպի Հայերը, որոց հոգեկան վիճակը կ'սկսէր անոր անհաճոյ ըլլալ, և իր բռնապետի սարսափահար սիրտը իր անձին ապահովութեան միջոցը իր հպատակներուն արեան մէջ տեսնելով դժբաղդ Հայաստա-

բեզի. եթէ տետրակներէն վազ անցնինք, գէթ ընկերութիւնը մաքրած կ'ըլլանք այդպիսի զօրաւոր արգելքներէ . . .

ԱՏԵՆԱՊԵՏ. — Այ՛ո՛ : ուղղակի արտաբուս . . .

ՇԱԹՕԵԱՆ. — Ո՛չ թէ այն միտակ, այլ մի քանի ուրիշներ ալ մեկտեղ :

ԱԳԱՊԵԱՆ. — Բայց դուք ձեռնհասութիւն ունի՞ք զանոնք արտաքսելու. այս բանը ընդհանուր ժողովոյ կը պատկանի :

ՄԱՐԻՄԵԱՆ. — Կը ձայնակցիմ :

ՇԱԹՕԵԱՆ. — Ընդհանուր ժողովոյ մէկ քանի անգամոց սիրտը շինել իմ վրայ. անոնք ինձ համար ոչխարի նման հետեւողներ են. բաւ է որ առաջարկենք : Հանրագիր մը կը պատրաստենք և ստորագրողներուն կ'ըսուի թէ՛ ընթերցարանը լաւագոյն դիւրի մը մէջ պիտի գնենք, ու անոնք կ'ստորագրեն կ'երթայ : Այնուհետեւ մենք գիտենք թէ ինչպէս կը շարժինք. մեր ձեռքէն բռնող չ'կայ :

(Ոտքի վրայ այս խօսակցութիւնները կատարելէ վերջ կը մեկնին : Երկու վայրկեան յետոյ Շաթօեան Բարգ. ընկերութեան սրճարանին մէկ անկիւնը նստած հանրագիրն օրինակը կը պատրաստէր, որպէսզի ստորագրել տայ : մեն անոնց՝ որոնք ստորագրելու ժամանակ չ'են ուզեր հասկնալ թէ՛ իրենց ստորագրութեանց վերի կողմը ինչ գրուած է. պարտք թէ պահանջ . . .)

(Շարունակելի)

Թ Ե Ր Թ Օ Ն

Ի Ն Զ ՈՒ Գ Ե Ն Բ Յ Ա Զ Ո Ղ Ի Ր

ՏԵՍԻԼ Բ .

Ն Ի Ս Տ Տ Ն Օ Ր Է Ն Ժ Ո Ղ Ո Վ Ո Ց

(Շար. Տես, «Արշալոյս» թիւ 106—107)

ՁԱՅՆԵՐ. — Ե՛ս Արտաքին գործոց նախարարը կը ճանաչիմ : (Ուրիշ մը) : Ես ներքին գործոց նախարարին հետ շատ լաւ կը տեսնուիմ, (երրորդ մը) : Ես ոստիկանապետին հետ սերտ յարաբերութեան մէջ եմ և այլն . . .

(Ամենը մէկտեղ կը պատրաստուին իրենց ծանօթներուն դիմել և ոտքի վրայ կ'ելլեն մեկնելու համար) :

ԱՏԵՆԱՊԵՏ. — Մեր իրեն գրած նամակի պատճէնն ալ միտասին առէք, այն՝ որ առանց պատասխանի թողած է :

ՇԱԹՕԵԱՆ. — Բայց եթէ չ'կրնայ իր հպատակութիւնն հաստատել . . .

ԱԳԱՊԵԱՆ. — Ընդհանուր դատախազին կը յանձնենք, և երանի թէ՛ Շաթօեանի ըսածին պէս, չ'կարենայ հաստատել իր հպատակութիւնը, այն ատեն՝ խնդիրը շատ նպատակաւոր կերպարանք կ'ստանայ մեզ համար. որովհետեւ ինչպէս քիչ մը առաջ լսեցինք. նախարարա-

նը կոտորելու ձեռք զարկաւ : Այս անգամ
Եւրոպական տէրութիւնները ձայն հանեցին
ըսելով թէ՛ քրիստոնէից արիւնք կը հոսի :

Ինչանագիտութեան կեղծուպատիր սը-
տէն ելած այս գոչը , աւա՛ղ , Հայերը մու-
ցուց այնպիսի ճամբու մը , ուր դառնագա-
ռըն յուսախարութիւնք միայն պիտի գրու-
նէին : Անոնց համար լաւագոյն կ'ըլլար դի-
մել այն բնական միակ միջոցին , որ իրենց
մօտ էր , և որ ուրիշ բան չ'էր բայց միայն
պարզապէս միաբանութեամբ գործել թուր-
քերու հետ . այս վերջիններն ալ ենթար-
կուած ըլլալով մեկնոյն վտանգներու :

Դժբաղդաբար , Հայերը՝ իրենց ան-
համբերութեան մէջ՝ չ'նայեցան այս ամե-
նակարեւոր կողմը , և եւրոպայի օգնութեան
սպասեցին . միանգամայն բարբարոսութեան
դատապարտելով ճշմարիտ Թուրքերը , ո-
րոնք սակայն անպատասխանատու են այդ
կոտորածներուն համար : Թուրքերուն կար-
ծուած վայրենութեան գէ՛մ Հայերուն
արձակած անէծքներուն կը միանային նաև
բացազանչութիւնները եւրոպական դիւա-
նատանց և մամուլ , որոնք սակայն կատա-
րելապէս կ'անդիտէին թէ՛ այն միջոցին՝
ի՛նչ կը խորհէր մեր ժողովուրդը յիշեալ
եղեռնագործութեանց վրայ : Այս անխա-
ղթացքը ձրի նախատինք մը եղաւ հան-
դէպ ազգի մը , որուն հետ թէ՛ հայերը և
թէ՛ Տէրութիւնները միաբանելու էի :

(Շարունակելի)

Կ Ա Ր Ե Ի Ո Ր Ա Ձ Դ

Նոր կեանքի ի եւ Անահիտ ի Անթերի
մի հաւաքածոյն ունենալ փափաքողք ա-
ռիթը ձեռքէ չ'փախցնելով փութով Խմբա-
գրատունն գիմեն , դիւրագին զայնս գնե-
լու :

Գ Ա Ֆ Է Ե Փ Ր Ա Տ

ԱՊՏԻՆ — ՊԱՊ — ԷԼ — ՊՈՍԹԱՆ

Պաշտիկ եւ Նուագածուաց խմբի
Զօրանոցիկն ձիշտ դիւնացր

ՕՂԱՆԵՒՍ ՄԻՍՈՆԵԱՆ . ԵՒ
ԴԱՆԻԷԼ ՀԱՅԱԳՈՐԾԵԱՆ ԸՆԿ .

Պատիւ ունին ծանուցանել Արգոյ աղ-
գայնոց թէ՛ հանգստի ժամերն առողջարար
օդ ծծելով զուարճանալու և զովարար ըմ-
պելիներով յոգնած մտքերը կազդուրելու
համար , կրնան դիմել ԵՓՐԱՏ ՄՐՃԱՐԱՆԸ ,
որ վերոյիշեալ Ընկերութիւնը ամենամեծ
հոգածութեամբ և խնամով զարդարած և
յաճախորդաց հանգիստը ինկատի ունենա-
լով՝ պատշաճագոյն վիճակի մը մէջ դը-
րած է :

ԳՍՅԷ ԵՓՐԱՏ ի մէջ կը մեծարուին
զովարար ըմպելեաց ամենամաքուրները .
ընտիր և թարմ՝ օշարակներ , անխորդախ
սուրճ և անխառն կաթ :

Մամաւոր խնամքով կը պատրաստուի
նաև մրգաթան և չամչարակ (խոշապ) :

Հոն դիմող յաճախորդք գոհ պիտի
մնան , գտնելով մաքուրութիւն , ճաշակաւոր
սպաս և անթերի ծառայութիւն , ամենէն
խստապահանջները գոհացնելու աստիճան :

Տպագրութիւն ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆ

ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

«ԱՐՇԱԼՈՅՍ»

ՀԻՄՆԵԱԼ 1 ՄԱՅԻՍ 1900

ՇԱՐԽԱ ԱՊՏԻԿԱ ԱԶԻՋԻ ՍԿԻՋԲԸ

Օտեսնիյի դեղատանիկն դիւնացի փողոցին մեջ .

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ մէջ , մաքուր
և ճաշակաւոր պատրաստուելու պայմանաւ ,
կ'ընդունուին .

Այցեխարտեր , Շրջաբերականներ , Գիրքեր ,
Հրատարակներ , Մանկապատկերներ ,
Կանոնագիրքեր , Տոններ և այլ և այլ վաճա-
ռականական յանձնարարութիւններ :

Ամենակատարեալ ճշգրտագոյնութիւն և
չափաւոր գին :

ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ ԿԱՆԻԿ ԵՆ :

ՀԱՆԱԲԱԾՈՅ

ՀԱՅՈՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒ

ՏՆՈՐԷՆ Լ . ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ — ԲԱՐԻՁ

Ականաւոր և հեղինակաւոր երաժիշտ-
ներու աջակցութեամբ եռաձայն և քառա-
ձայն պատրաստուած սոյն հաւաքածոյն
գնել փափաքողներն կամ բաժանորդագր-
ուիլ ուզողներն , կրնան դիմել՝ Արշալոյս ի
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՊԱՐԱՆԻ Հիմնադիր-Տնօ-
րէնին :

ՀԱՅ ՃԱՇԱՐԱՆ

ՄԻՋՐԱՆ ԵՂԱՐԱՐԻ ԳԱԶԱՆՃԵԱՆ
ՇԱՐԽԱ ԱՊՈՒ — ՍԱՊՍՀ

Նեովի-Իւնիպետսկի Դեղատանիկն դիւնացր

Որ և է կերակուր անորժանամ և սը-
նընդարար ըլլալու համար պէտք է , մսի ,
իւղի , բանջարեղինաց լաւագոյն տեսակը
ընտրել . այն համոզմամբ որ անդարար կե-
րակուրը ստամոքսին կենսատուն է , ու
որ ստամոքսին յարմար կերակուր չ'ընտրել
անորժակին թշնամանք կ'ընէ :

Իրենց կենաց բարեկամ՝ եղողներն կը
հրաւերենք յաճախել մեր վերոյիշեալ
ճաշարանը , վստահ ըլլալով թէ՛ գոհու-
թեամբ պիտի մեկնին :

Գիններն ԴԻՒՐԱՄԱՏՉԵԼԻ ԵՆ :

ՏՃԻ ՄԻՉՈՒԱԼ ԼԱՅՑ

ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏԸ ԵՒ ԿԱՐԵՒՈՐԸ
ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 1 ՄԻԼԵԱՐ 437 ՄԻԼԻՈՆ

Ապահովագրեալներուն կը բաժնէ ամե-
նէն աւելի շահաբաժինները :

Ապահովագրեալներուն արդէն վճարած
է կամ ի նպաստ իրենց գումարած է 3 ՄԻԼԵԱՐ
480 ՄԻԼԻՈՆ՝ որ գրեթէ աշխարհի ուրիշ որ
և է ընտրութենէ մէկ միլիար աւելի է :

Ս . ԼԷՕՆԱՐ ընդհանուր ներկայացուցիչ
ԻԳԻՏԻՐԷ

ՄԻ՛ ՄՆԱԲ ԵՐԲԷՔ ԱՌԱՆՑ ԺԱՄԱՑՈՅՑԻ

Քանի որ ՍԷԼՎԱՆԵԱՆ վաճառատան մէջ
(ի Մուսքի) պիտի գտնէք միմիայն 22 ՂՐԾ ի
նիքէլ , կոթէն լարուղ սիրուն ժամացոյց-
ներ որոց լաւ բանիլը երաշխաւորեալ է :
Նոյնպէս ամեն տեսակ ոսկի ժամացոյցներ
120 ՂՐԾ է սկսեալ մինչև 2500 ՂՐԾ : Ինչ-
պէս նաև արծաթ ոսկեպատ , նիքէլ , և օք-
սիտէ ժամացոյցներ . պատի և քօնսօլի բազ-
մազան Բանտի շնոր և ամեն հաշակի յար-
մար Գոհարեղէնք :

Ճոխ հաւաքածոյ բուն Ամերիկեան Գօ-
զօկրաֆիններու :

Ա Ձ Դ

Քղիի Օրօր դիւղի Ազգայիններէն Տիար
Մարտիրոս Շանօեանի որդի Պ . Կարապետ
Շանօեան 26 ամեայ երիտասարդը Հայա-
լինոյ գէպքերէն ի վեր անհետացած է և
իւր Գահիրէաբնակ ազգականները կ'ուզեն
գիտնալ թէ՛ մեր կը գտնուի այդ երիտա-
սարդը :

Կը խնդրուի ուրեմն մեր Պատ . Ազգա-
լիններէն որ եթէ գիտեն յիշեալ երիտա-
սարդին յ՛ւր գտնուիլը կամ եթէ ո՛ր և է
տեղեկութիւն ունին անոր մասին , բարե-
հաճին ծանուցանել Արշալոյս ի Տնօրինու-
թեան :

Նոյնպէս կը խնդրուի մեր Արտասահ-
մանի Պատուարժան պաշտօնակիցներէն , որ
չնորհ ընեն ներկայ ազգարարութիւնը կրկ-
նել իրենց թերթերուն մէջ . ի հարկին նը-
մանօրինակ ծառայութիւններ սպասելով
մեզմէ :

ՏՕԲԹ. ԺՈՐԹ Փ. ԷՎԼԻԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱՐՈՅԺ
Ապսին Շարա Գուպրի Թի. 55

Կը պատրաստէ ամեն բերաններու և հա-
սակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ
ակռաներ :

Կը դադրեցնէ վայրկենապէս ակռայի
ցուերը , ամերիկեան նորագոյն մեթօտով իւր
պատրաստած գեղերով :

Կը բուժէ լինտերու և բերնի ամեն տե-
սակ հիւանդութիւններն :

Իր լեցուցած ակռաներուն տոկունու-
թիւնն առ նուազն երկու տարուան համար
կ'երաշխաւորէ :

Վկայեալ աղքատներու ձրի դարմանում,
ամեն օր կէսօրէ ետք ժամը 3—5 :

Աշխարհի մէջ գտնուող ուրիշ որ և է ըն-
կերութենէ աւելի երաշխաւորութիւններ ,
ընդարձակ գործառնութիւններ և հրապա-
րակի վրայ աւելի ապահովագրութիւններ
ունի և աւելի ապահովագրի կը գանձէ :

ԱԼԷԻՍԻՍ ԼԱՎԻՉՈՆ գլխաւոր գործա-
կատար յ'Աղեքսանդրիա :